աստ ի Լէօպոլիս. յորում ոչ միայն զգիտութիւնս իմաստասիրականս և աստուածաբանական եկեղեցւոյն Հռոմայ, այլ և զլեզուն հայկական ուսանի-ցէին, և յառաքինութիւնս կրթիցէին, և քահանայացեալք ծառայիցէին ե-կեղեցւոյ համարժանապէս, և անջրելի պահիցէին զհաւատն կաթուղիկէ։ Քանզի էին այնր ժամանակի քահանայք՝ յոյժ տգէտք ներհրմտութեանց և անվարժ լեզուին արամեան. որպէս և ինքն ժողովուրդն։ Զորոց երբեմն գրեաց ոմն.

« Իսկ քահանայք որք ի Լօվ կան՝
Գոռոզ յանդուգն ամբարտաւան.
Ոչ ումեք են նոքա հաւան,
Զտեսի յայլուր սոցա նըման։
Զգիտեն բընաւ զսահման ուսման,
Եւ ոչ իսկ զլեզուն հայկեան.
Զոր ընթեռնուն՝ ոչ հասկանան,
Եւ գիտողաց վերայ խրոխտան։

Վասն որոյ գրեալ առ փափն Աղեքսանդր Է. յուշ արարնմա զհարկաւորութիւն վարժարանին. որ և հայրականաւ սիրով կատարեաց զխնդիրն, հիմնելով աստ ի Լէօպոլիս զվարժարան երկոտասանից նպարունեաց (թոշակաւոր) ծախիւք առաքելականի որբոյ աթոռոյն, յամի Տեառն 1662ին, և ի թուին Հայոց ՌՃԺԱին. և առաքեաց զաստուածաբան վարդապետն Կղեմէս ի կարգէ Թէատինոսաց, զհմուտն արամեան դպրութեան, զի վարժիցէր զնոսա ի գիտութիւնս և ի լեզուն հայկական։ Որ մինչեւ ցայժմ ծաղկի նոյն վարժարանն ընդ կառավարութեամբ Հարց Թէատինոսաց. և ի նմանէ բողբոջին քահանայք իմաստունք, վարդապետք աստուածաբանք և եպիսկոպոսունք։ — Իսկ Նիկոլայոս կացեալ յարքեպիսկոպոսութեան զամս 55, մեռաւ աստէն ի Լէօպոլիս, յամի Տեառն 1681ին, ի հոկտ. 14ին։

Մինաս վարդապետ Էվդոկացի, Զիլիֆտար օղլու մականուանեցեալ, եպիսկոպոս Պուղտանու, եկն ընդ իս ի Լէօպոլիս՝ ի դառնալ իմում, և առաջի գարտինալին Փալլավիչինի Լէկադի Փափին, որ յայնժամ էր ի Լէօպոլիս, արար զդաւանութիւն հաւատոյ կաթուղիկէի, յամի Տեառն 1686ին, և ի թուին Հայոց ՌՃԼԵին։

Ազարիա կաթուղիկոս Աղուանից համակամութեամբ եպիսկոպոսաց ոմանց յիւրոյ նահանգին, զդաւանութիւն կաթողիկէ հաւատոյ առաքեալ էր առ փափն Իննոչենցիոս ԺԱ, և առ իս գրեաց ի ձեռն Զափոլոսքի Եկեղեցիային Լեհացւոյ՝ յամի Տեառն 1688ին, յաղագս իրաց ոմանց հոգալոյ առ սուրբ աթոռն առաքելական՝ վասն իւր և վիճակին. զոր և արարի։

Մովսէս վարդապետ Երեւանցի յամի Տեառն 1689ին, եկն ի Լէօպոլիս,